

հետաքրքրութիւնը սկիզբ կ'առնէր Սահմանադրութեան
 հրատարակումովը, Ազգային ժողով որակուած մեծ օ-
 ճախէն: Հոսհոսութեան վկայական մը: Քսաներորդ դա-
 րու մոտքին Մոսկուա ըրած մոտեոն ոգիով ուսանող
 մը չէր հասկնար անյուր խանդավառութիւնը, զոր ազ-
 գային դատին թղթական, դիւանական սա հետապնդումը
 կ'արժեցնէր դասակարգ մը մարդոց մէջ, մեծ մասով՝
 խմբագիր, ուսուցիչ եւ պաշտօնեայ: Կատարեալ ասպա-
 րէզ մըն էր ան այդ օրերուն, դեռ հիմա շարունակուող,
 ուրիշ երանգի տակ: Աչազուրկ դաստիարակը (որուն
 հմտութիւնը գնահատեց ազգը շատ վերջերը, Ամերիկայի
 մէջ վասպուրականցիներու նպաստովը հրատարակելով
 անոր ստուար մէկ պատմա-բանաստեղծական երկասի-
 րութիւնը) համեստութեամբ՝ վանեցին երբ չի վիրա-
 ւորեր՝ համեստ է՝ կը համարձակէր ուսահայերը հրա-
 լիրել ժամանակակից պատմութիւնը «մի քիչ աւելի»
 ուշադրութեամբ ուսումնասիրելու: Յեղափոխութիւն-
 ներու պատմութեան հոլովոյթը ճշդող, անոր կարգ մը
 օրէնքները արդարացնող երեւոյթներ էին դարերու երե-
 սին, ու արդիւնաւէտ դառնալու համար, պարտաւոր էին
 օգտագործել անոր, պատմութեան բոլոր փաստերը: Յե-
 ղափոխութիւնը ջուղա՛ւ էր պատմութեան: Արդիւնքի
 եւ պատճառի յաւիտենական հա՛րցը: Կովկասահայերը
 շատ առաջանալու չէին իրենց արհամարհանքին մէջ դէ-
 պի տաճկահայը: Հոսեոսը ածական մըն էր, զոր գործա-
 ծելու իրաւունքը կը թուէին կորսնցուցած, քանի որ Պա-
 րոնեան գոնէ չէր ծնած իրենց լեզուէն: Անհամեմատ աւե-
 լի լաւ պայմաններու մէջ չնեղուելով պետական հալա-
 ծանքէն, անոնք պարտաւոր էին մեր պատմութիւնը
 բարձրացնել իրական գիտութեան մը: Ու պարտաւոր
 էին տեղեակ ըլլալ ծածկագիր հեռագիրներու բովան-
 դակութեան իրիմեանի պատուիրակութենէն, քանի որ
 ինք, իր այդ վիճակովը, կարդացեր էր զանոնք... Վանի
 մէջ: Վանեցին, երբ կը վիճաբանի, իր փաստերը կը կշռէ
 աչքին խորութեամբը ու ձայնին անկիւնոտ խարտոցովը: